Հավելված N 3

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ալեհավաք-փոխակերպիչի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-141» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-141» պայմանագրում 2019 թվականի փետրվարի 08-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիր:

Փոփոխության նկարագրություն՝ կնքվել է լրացուցիչ համաձայնագիր «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲ ընկերության հետ:

Փոփոխության հիմնավորում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ, հրավերի 8.6-րդ կետ:

Պատվիրատու՝ ***ԱՆ «Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ***

11.12.2018 թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-141»

պայմանագրում փոփոխություն/լրացում կատարելու վերաբերյալ

համաձայնագիր № 1

ք. Երևան 08 փետրվարի 2019 թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Բաբկեն Թադևոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-141» պայմանագրի 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. Հիմք ընդունելով 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կողմերը որոշեցին դեկտեմբերի 11-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-141» պայմանագրի մասով ապրանքների մատակարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-141» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագրով նախատեսված դրույթները տարածվում են 2018 թ. դեկտեմբերի 11-ից կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների վրա:
5. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից. սույն համաձայնագիր № 1-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12	Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 32-10
Երևանի թիվ 1 ՏԳԲ՝	Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900018004649	Հ/Հ 15700-11489540100
ՀՎՀՀ 02625503	ՀՎՀՀ 01210095
Գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյան	Տնօրեն՝ Բաբկեն Թադևոսյան
_____ (ստորագրություն) Կ.Տ	_____ (ստորագրություն) Կ.Տ